անդադար ասում էինք՝ հարկաւոր է միութեամբ գործել, հարկաւոր է միանալ. էլ ի՞նչու թոյլ տալ, որ ֆլան վարդապետը ելնի երկրագործական ուսումնարան բանալ, միւսը փիլիսոփայական դպրոց հիմնէ և դրանով թէ՛ արգելք լինի Միացեալ ընկերութեան գործին, թէ՛ վնասէ նրա եկամուտներին։ Ասացէք խնդրեմ, ո՞վ կարող է երաշխաւոր լինել, որ վաղը չի գայ Պոլսից մի Դիոնիսիոս վարդապետ և կոնդակը ձեռին՝ չի սկսի հանգանակութիւն յօգուտ բացվելի փիլիսոփայական դպրոցի—ո՛չ թէ կարնոյ նահանգում, այլ օրինակ՝ Ախլաթում, կամ Մուշում, կամ Մանդկերտում, քաղաքի անուններ շատ։ Կարո՞ղ ենք ասել —„հարկաւոր չէ“, չենք տայ նուիրատուութիւն“. նա քարոզներ կը խօսի, կերթայ աղաներին այցելութեան, կը խնդրէ, կաղաչէ, կը համոզէ—և իր ուզածը կանէ։ Միւս օրը դուրս կը գայ մի ուրիշը, և այսպէս անվերջանալի մի շարք աբեղաներ, որոնք „Հայրենեաց սիրոյ համար“, տարիներ կը շրջեն քաղաքից քաղաք, լաւ կուշտ կուտեն, առատ եկամուտներ վեր կառնեն, ժողովուրդը „կը մխիթարեն“ և հապարներ թօփ անելով, կելնեն կերթան։ Եւ այնուհետև սպասիր, որ փիսիսոփայական դպրոց պէտք է բացվի.... իսկ միւս կողմից թո՛ղ Միացեալ ընկերութիւնը նեղութիւն կրէ, ո՞ւմ պէտքն է. ո՞ւմ պէտքն է, թէ վաղը այդ ընկերութիւնը ստիպված կը լինի մէկ մէկ փակել իր ուսումնարանները և իր ուսուցիչները յետ կանչել։

Բացի Միացեալ ընկերութենից մի ուրիշ հիմնարկութիւն էլ կայ, որը գրաւած է մեր համակրութիւնը և որին նպաստելը մեր պարտքն է։ Արդէն տարուց աւելի է, որ Խրիմեան Հայրիկը՝ առանց մեզանից մի կոպէկ խնդրելու, բացել է Վարագայ վանքում մի երկրագործական դպրոց. դպրոցի վարչութիւնը յանձնած է հմուտ երիտասարդ Նշան Մաղաթեանին, որ գործնականապէս կատարելագործվել է Գերմանիայում և արդէն գործը բաւականին առաջ է գընացել։ Բայց այդպիսի մի մեծածախս հիմնարկութիւն կառավարելը՝ երևում է՝ դժուար է առանց կողմնակի նուիրատուութիւնների. ուստի հայրիկը մի երկու անգամ „Մեղու“ լրագրի միջոցով դիմեց ռուսահայ հասարակութեանը, նպաստ խնդրելով մեզանից՝ տարեկան գո՛նէ 3 հազար րուբլ։ Սակայն՝ մինչև այժմ համարեա ոչինչ նուիրատուութիւն ժողոված չէ. ի՞նչ է, սպասենք, որ Վարագայ երկրագործական դպրոցն էլ փակվի. իսկ զանազան վեղարաւորներ տարիներով շրջեն հայաբնակ քաղաքները և մի այլ երկրագործական ուսումնարանի անունով փողեր ժողովեն, ծախսեր անեն, աշակերտների համար շապիկացու և վարտիքացու առնեն, պարտքեր վճարեն և ո՞վ գիտէ ե՞րբ ուսումնարանի հիմքը ձգեն...։ Եւ իրաւի, դժուար է հաստատապէս ասել — կը բացվի՞ արդեօք կարնոյ երկրագործական դպրոցը. մենք կարծումենք, որ հասարակութիւնը ապահով չէ, թէ իր նուիրած գումարը նպատակին կը հասնի. և ահա ինչու. ա)—ինչպէս անցեալ տարի տեսանք, կան այնպիսի անակնկալ դէպքեր, երբ Հ. Ռուբինեանը „իր նուիրական պարտք կը համարի երկրագործական ուսումնարանի նուիրատուութեան գումարից հապաբ րուբլի նուիրել յօգուտ սովելոցս“ („Փորձ“, 1880, № 3, Հ. Ռուբինեանի Նամակը)։ Ո՞վ կարող է ասել, որ էգուց էլ չի պատահի մի այսպիսի անակնկալ կարիք. և այնուհետև հայը սուրբը դարձեալ իր նուիրական պարտքը կը համարի հանգանակած գումարից ցրուել այստեղ-այնտեղ։ Այս մէկ, բ) Դեռ երկու տարի առաջ Հ. Ռուբինեանը, բացատրելով հասարակութեանը իր ժողովարարութեան նպատակը, մի քանի անգամ յիշում է, որ ինքն ունի այժմ Կ. Պոլսոյ մէջ տասը հազար արժէքով մի շէնք—որը նա նուիրում է ազգին և կառկում Էջմիածնի մայր աթոռին. բայց այդ շէնքը „վերջին պատերազմի երեսէն.... փոքր ինչ պարտուց ենթարկվեցաւ“ („Փորձ“, 1879 № 5, յայտարարութիւնների մէջ)—եթէ չեմ սխալվում, կարծեմ Հայկակն էր, որ իր ժամանակին հերքեց այդ տեղեկութիւնը „10 հազար արժէք ունեցող“ շէնքի վերաբերութեամբ, համարելով նրան շատ չափազանցացրած և միայն մի քանի հազար ղուրուշի արժէք ունեցող։ Իսկ ինչ վերաբերում է „փոքր ինչ պարտուց“—դրա մասին դժուար է մի խօսք ասել, որովհետև ինքը հայը Ռուբինեանը չէ բարեհաճել ո՛չ մի տեղ որոշ կերպով նշանակելու իր պարտքի գումարը. ուստի այդ փոքր պարտքը կարող է լինել և՛ 100 րուբլ, և՛ 1000 րուբլ, և՛ 10 հազար րուբլ՝ նայելով հայը սուրբի նպատակներին։ Այսպէս ուրեմն՝ Հ. Ռուբինեանի հանգանակած գումարից հանելու է նախ՝ սովելոց նուիրած հազար րուբլը և այլ այսպիսի անակնկալ դէպքերին հարկաւորած նուէրները, յետոյ՝ „փոքր ինչ պարտքը“, ապա՝ զանազան իրեղէնների տուած գումարը, որ կարծեմ 3—4 հազարի է հասնում և որը պէտք է անշուշտ կորած համարել, որովհետև քաթանեղէն և այլ այսպիսի ապրանքները կը փտեն, կը փճանան մինչև ուսումնարանի հիմնվելը։ Էլ ո՛րքան գումար պէտք է ժողովէ Հ. Ռուբինեանը, որ այս բոլոր խոշոր ծախսերը հանելուց յետոյ՝ դարձեալ մեծ դրամական միջոցներ ունենայ ամբողջ երկրագործական ուսումնարան հիմնելու համար. խօսմ նա գանձեր պիտի չը դիզէ՞....

Սրանից յետոյ մնում է մեզ հաստատ մնալ մեր համոզմունքներին և կրկին անգամ մի առ մի մէջ բերել այդ կէտերը. 1) որ Հ. Ռուբինեանի հանգանակութիւնը անյարմար է և անօգուտ մեր գաւառական քաղաքների համար, վնասելով նրանց առօրեայ անհրաժեշտ կարիքներին, 2) նա վնասակար է այնպիսի մի համազգային ընկերութեան գործունէութեանը, ինչպէս Միացեալ Ընկերութիւնն է, խլելով նրա եկամուտները. 3) հապա թէ իրագործվի երկրագործական ուսումնարանի գաղափարը հայր Ռուբինեանի ձեռքով, քանի որ հանգանակած գումարը ենթարկուել է և դեռ էլի կարող է ենթարկուել անպէտք և անակնկալ ծախսերի ու պատահարների....

Այս հիմունքներով՝ բոլորովին իրաւացի կը լինի խնդրել Հ. Ռուբինեանին, որ առանց այլ և այլի, առանց կանխապէս զանազան իրեղէններ գնելու շտապի ուսումնարանի հիմքը ձգելու, և եթէ մի տարուց յետոյ էլ չիրագործվի ենթադրեալ երկրագործական ուսումնարանը, այնուհետև հայ հասարակութիւնը՝ չորս տարի իզուր սպասելով, կարող է պահանջել, որ իր նուիրած գումարը տեղափոխվի Միացեալ Ընկերութեան գանձանակը, այն ընկերութեան, որի թէ՛ յայնաճաւալ գործունէութիւնն է մեզ յայտնի և թէ՛ դրամական զգալի կարօտութիւնը։ Եւ այս տեղափոխելու ըսկզբունքը օրինակ տուեց մեզ ինքը Հ. Ռուբինեանը, նուիրելով յօգուտ սովելոց 1000 րուբլ „յանուն երկրագործական արուեստի և վարժարանի նուիրատուութեան գումարից՝ իբրև առաւելագոյն ի պողակն և աւելի կարևոր պահանջ....“ („Փորձ“, 1880 թ. համ. 3 Հ. Ռուբինեանի նամակը)—Ուրեմն՝ եթէ Միացեալ ընկերութիւնը ունի հոգալու „առաւելագոյն ի պողակն և աւելի կարևոր պիտոյքներ“ — քան Հ. Ռուբինեանի քարոզած երկրագործական ուսումնարանը, ապա ուրեմն պարզ է, որ հայը սուրբի հանգանակած գումարը՝ կամ ամբողջովին, կամ մասամբ պէտք է յանձնվի Միացեալ ընկերութեանը և Վարագայ վանքի երկրագործական վարժարանին, որ արդէն գործում է։ Շատ աւելի լաւ է պահպանել եղածները, քան նորերը հիմնելու անունով՝ եղածներին էլ վնասել։

Ահա՛ թէ ինչ է մեր կարծիքը Հ. Ամբրոսիոս Ռուբինեանի ձեռնարկած հանգանակութեան մասին։

Բ.

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՑԻՑ

—

Յուլիսի 8-ին

Ցիրաւի շատ զարմանալի է մեր հասարակութեան անտարբերութիւնը դէպի ամեն ազգային գործերը։ Սրանից տասը տարի առաջ չուշեցի պ. Պօղոս Ալէքսանեանց տեսնելով Ղուբայում ուսումնարանի կարևորութիւնը, ձեռնարկեց այդ գործին և ինքը նուիրեց 1000 րուբլ, Թիֆլիսեցի պ. Դ. Իզմիրեանց էլ հետևելով առաջինի օրինակին նուիրեց 200 րուբլ. բացի սրանից գտնվեցան անձինք, որոնք կարճ ժամանակում իրանց առատ նուիրատուութիւններով հասցրին գումարը 2500 րուբլու և բացին քաղաքիս մէջ մի դպրոց Հայոց հոգևոր դպրոց անունով։ Առաջին անգամ ընտրված հոգաբարձուները գործը լաւ տարան, բայց երբ նրանց ժամանակը վերջացաւ,—ուսումնարանը սկսեց օրից օր ընկնել։

Այժմ դպրոցը խղճալի դրութեան մէջ է։ Հոգաբարձուները անտարբեր են, ուսուցիչներ չը կան, կամ եղածներն էլ անպիտան են։ Այժմ մեր դպրոցը կարելի է չեղած համարել։ Զուր փողեր, զուր աշխատանք։ Հայը միայն սկզբից տաք է կպչում գործին, քանի նա նորութիւն է, իսկ շուտով ամեն բանից ձեռք է վեր առնում և անտարբեր կերպով թոյլ է տալիս, որ շինածը ինքն իրան քանդվի։ Հայը միայն սէր ունի դէպի շինելն ու ստեղծելը, իսկ մի անգամ շինածն ու ստեղծածը՝ աւելորդ է համարում պահպանել։ Հայի ոչ մի գործ տեւողականութիւն չունի։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 20 յուլիսի

‹Մեղուի› վերջին համարներից մինի մէջ կարդացինք Կարապետ Մատինեանց ստորագրութեամբ մի նամակ, որի մէջ նամակագիրը ‹Մշակի› թատրոնասէրի ակնարկութիւնները դերասանների չը մասնակցելուն Աստղիկի ներկայացմանը ‹զրպարտութիւններ և զրախօսութիւններ› է անուանում, այսինքն, թէ Աստղիկը դերասաններին չէ խնդրել և հետևապէս դերասաններն էլ ինչ հարկից ստիպված պէտք է իրանք առաջարկէին Աստղիկին, որ ցանկութիւն ունեն մասնակցելու Նրա ներկայացմանը։ Նամակի գլխաւոր միտքը, գոնէ ‹ծուծը› սա է համառօտապէս։

Հետևեալ պարոնների՝ Գրիգոր Պարոն-Սարգսեանցի, Գրիգոր Տէր-Մարկոսեանցի, Ստեփան Աֆիրազեանցի, Սմբատ Հովուեանցի մօտ պ. Կարապետ Մատինեանցը հաւատացնում էր, թէ Ամատունին ասել է, եթէ դերասաններից մէկը մասնակցէ Աստղիկի ներկայացմանը, նա էլ խմբի մէջ չէ կարող լինել։ Սմբատ Հովուեանցը իր կողմից աւելացնում էր ‹Պարոն Կարապետ, չեմ կարծում թէ Ամատունին այնքան անվեհանձն գտնվի, որ այդպիսի բան ասած լինի›. բայց Կարապետ Մատինեանցը պնդում էր համոզական եղանակով. ‹ասել է, Հովուեան, ասել է, մեզ Զմշկեանը ասաց›։

Պարոն Տէր-Դաւթեանցը մեզ վերոգրեալներիս, բացի Սաֆիրազեանից, ասում էր՝ ‹եղբայր, ես սիրով կը մասնակցէի, բայց խօ չէի կարող Աստղիկի պատճառով զրկվել իմ ապրուստից› և շարունակում էր ‹մանաւանդ, որ ես Աստղիկի սնցեալ տարվայ բենեֆիսի տօմսակներից քսան բուբլու չափ ծախսել եմ և փողը մինչև այժմ չեմ տուել, գոնէ այդ դուրս կը գար›—

‹Մեղուի› մէջ Մատինեանցի յօդուածը տպված օրը Արծրունու թատրոնում Աղայեանցի օգտին տրվելու ներկայացման կրկնութեան ժամանակ, օրիորդ Վարդուհին (մշտական խմբի դերասանուհի է) ասա թէ ինչ ասաց, իբրև՝ Կարապետ Մատինեանցին, Աղայեանցի, Գրիգոր Պարոն-Սարգսեանցի, Մկրտիչ Տէր-Սիմէոնեանցի, Գէդէոն Միրազեանցի, Լևոն Վարձելեանցի, Սմբատ և Աղասի Հովուեանցների և օրիորդ Մելիքեանցի ներկայութեամբ. ‹ինձ խնդրեց Աստղիկը, որ մասնակցեմ իր ներկայացմանը, որովհետև ես էլ լսել էի, որ մի բան կայ, առացի նրան, որ գնամ հանգամանքները իմանամ և այնուհետև կտրական խօսքս կասեմ։—Եկայ Ալէքսանդրեան այգիում պատահեցի Կարապետ Մատինեանցին և Տէր Դաւթեանցին. սրանք ասացին, որ Ամատունին հրամայել է, եթէ մեր դերասաններից մէկը համարձակվի մասնակցել Աստղիկի ներկայացմանը, նա էլ խմբումը չի լինի›. — Մատինեանցը կարմրեց, գոյնը մի քանի տեսակների փոխեց... և ինչ, ընդհանուր ծիծաղը և ‹խայտառակութիւն և ամօթ քեզ, Կարապետ›—բառերը ներկայ եղողների վերջ դրեցին խօսակցութեանը։

Այժմ այս բոլորից յետոյ, ընթերցողին ենք թողնում, թէ ինչ անուն կարելի է տալ Մատինեանցի յօդուածին։ Ճշմարտութեան դէմ գրել սրան—նրան հաճոյանալու համար պատիւ չէ բերում ‹մարդ› անուն կրողին, պարոն Մատինեանց։

Յարգոյ խմբագիր, ճշմարտութիւնը ոտնակոխ արած տեսնելով, չը կարացանք լռել, քանի որ մեր լռութեամբը խղճմտանքի դէմ գնացած կը լինենք։ Այս նամակը ուղարկեցինք ‹Մեղուին› բայց նա չուզեց տպել։ Ուստի խնդրում ենք բարեհաճեցէք ճշմարտութեան անունով տպել ձեր լրագրի մէջ այս մեր մի քանի տողերը։—

Գ. Պարոն-Սարգսեանց, Լ. Վարձելեանց, Օր. Մելիքեան, Աղասի Հովուեանց, Գրիգոր Տէր-Մարկոսեանց. Սմբատ Հովուեանց։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մոսկվա, 20 յունիսի

Ինչպէս յայտնի է ‹Մշակի› ընթերցողներին —այդ լրագրի 72 համարում լոյս տեսաւ մի յօդուած ‹Մի քանի խորհրդակցութիւններ Լազարեան ճեմարանի առթիվ›։ Թէև յօդուածի ստորև որոշապէս դրած է ‹Պետերբուրգ› և Լ. ստորագրութիւնը, այնուամենայնիւ գտնվեցան այստեղ անձինք, որոնք —ով գիտէ ինչ զգացմունքներից դրդված—վերագրեցին այդ յօդուածը ինձ և դեռ մինչև այսօր չարունակում են իրանց անհիմն և անտեղի զրպարտութիւնները։ Յայտնում եմ հրապարակապէս, որ վերոյիշեալ յօդուածի հեղինակը ես չեմ։

Դր. Խալաթեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱՍՏՐԱԽԱՆ։ Հայոց հոգևոր դպրոցների հոգաբարձութիւնը հրաւիրում է պատրաստական դասատուների համար հայոց ընթերցանութեան ուսուցիչ, ոչ փոքր 20 դաս ունենալով շաբաթական, տարեկան 400 րուբլ ռոճիկով։ Ճանապարհի ծախսը 50 րուբլ հոգաբարձութեան կողմից է։ Պէտք է ներկայացնել ուսման վկայական մինչև օգոստոսի 10-ը, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ից։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են, ‹Յուլիսի 13-ին մի եղեռնագործութիւն պատահեց Աբասթումանից Ախալցխա ճանապարհի վրա։ Մի գնդապետի երիտասարդ կին վարձում է Աբասթումանում մի կառք Ախալցխա գալու համար։ Ճանապարհին կառապանը չեղվելով չօսէից, պլաթ-

տեցնում է կառքը մինչև երեկոյ, յետոյ կանգնեցնելով կառքը յանկարծ ընկնում է տիկնոջ վրա և կամենում է բռնաբարել։ Կինը պաշպանվում է, աղաղակում է, բայց ոչինչ չէ օգնում. կառապանը պինդ կապում է նրա ձեռները և բռնաբարում է նրան։ Իր գործը վերջացնելուց յետոյ այնու ամենայնիվ հասցնում է կիսամեռ կնոջը Ախալցխա։ Երիտասարդ կինը որ հիւանդ պառկած է այժմ Ախալցխայում, գանգատվել է քննիչին։ Զարագործը կալանաւորված է և քննութիւնը սկսված։»

—

Ախալցխայից մեզ գրում են որ այդ քաղաքի աղքատները կոչում են սովամահ, որովհետև պ. գաւառապետը արգելել է նրանց օգտին գանձանակ պտտեցնել, ինչպէս վաղուց է սովորութիւն է եղած Ախալցխայում։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են։ «Մօտ օրերս Փոքր-Պարնի գիւղում մի հարս ուզեցել է իրան խեղդել։ Տանը առանձին լինելու ատեն, յարմար ժամանակ գտնելով, չուանը կախել է և գցել է վիզը։ Բաղդաւորապէս մի կին իր դրացիներից, պատահմամբ ներս մտնելով, տեսնում է այդ անձնասպանութեան փորձը, չուանով կտրոցը գրպանից հանելով, կտրում է չուանը և հաղիւ հազ ազատում հարսին։ Անձնասպանութեան այդ փորձի պատճառը յայտնի չէ։ Այդ տեսակ դէպքեր շատ են պատահում գիւղերում։»

—

Այս օրերս մենք ստացանք տպագրելու համար հետևեալ գանգատը Թիֆլիսի հացավաճառներից։ Հացավաճառների (բուլօչնիկների) ուսուցիչ, պ. Հէյնէ, ստիպել է հացավաճառներին վճարել 10-ական բուբլ տարեկան տուրք, որ ցարդ գոյութիւն չէ ունեցել և չէ արդարանում օրէնքի ոչ մի յօդուածով։ Իր նպատակին հասնելու համար Հէյնէ սպառնացել է հացավաճառներին նրանց մանրավաճառութիւնը արգելել։ յորդորել է գործարանատէր հացաթուխներին, որ նրանց հաց չը տան մաս մաս ծախելու համար և յուլիսի 11-ին իր անիրաւութիւնը այն աստիճան է հասցրել որ քաղաքումս ապրող թիւրքիահպատակ հայ հացավաճառներից երեքին բանտարկել է տուել պոլիցիայում։ Այդ օտարահպատակ աղքատներից 10 բուբլ տուրք պահանջելը անիրաւ բան է, քանի որ գործարանատէր կարող հացավաճառները մինչև անգամ տարեկան 3 բուբլից աւելի հարկ չեն վճարում։ Մթթէ ուստաբաշին իրաւունք ունի ինքնագլուխ այս կամ այն տուրք հաստատել, աղքատներին հարստահարել և նրանց բանտարկել։ Հացավաճառները դէպի մեզ ուղղված իրանց գանգատի մէջ աւելացնում են, որ իրանք ցարդ բուլօչնիկների էսնաֆի մէջ ձայնի իրաւունք չեն ունեցել, ուստաբաշու ընտրութեանը չեն մասնակցել։ Ուրեմն մի մարդ որ իրանցից ընտրված էլ չէ, իրաւունք է համարում բռնանալ նրանց վրա, պատժել, բանտարկել այն անձանց, որոնք նրան իրանց ուստաբաշի չեն կարող ճանաչել։ Տեղական կառավարութեան և քաղաքային վարչութեան ուշադրութիւնն ենք դարձնում այդ անկարգութիւնների վրա։

—

Յուլիսի 15-ին տօնվեցաւ Պիատիգորսկում երեսելի ռուս բանաստեղծ Լերմոնտովի մահվան 40 տարվայ տարեդարձը։ Լերմոնտովի կիսարձանի պատուանդանում, ներկայութեամբ ամեն կողմից եկած պատգամաւորութիւնների և բազմաթիւ հասարակութեան, դրվեցան շատ պսակներ, որոնց թւում ինչպէս հաղորդում է «Московск. Телеграфъ» լրագիրը իրանց գեղեցկութեամբ ամենից շատ ուշադրութիւն էին դարձնում երկու պսակներ՝ մէնը օֆիցերների ընկերութեան կողմից, միւսը հայոց հասարակութեան կողմից։ Երեկոյեան տրվեցաւ խնջոյք, որից գոյացած 2,010 բուբլ գործ կը դրվի բանաստեղծի յիշատակին արձանի կառուցմանը։ Քաղաքը լուսաւորված էր։

—

«Голосъ» հաղորդում է որ Սիմֆէրօպոլի զէմստվոյի վարչութեան նախագահ Վինբէրգ ենթարկված է քրէական դատաստանի, մեղադրվելով պետական յանցանքի մէջ։

—

«Русскій Курьеръ» լրագիրը հաղորդում է որ ցէնզօրական մասնաժողովների նախագահներին նորերումս իրաւունք է տրված յետ դարձնել արգելված գրքերը։

—

Յայտնի է որ ներքին գործերի մինիստրութիւնը արգելեց Սմոլէնսկ քաղաքում հրատարակվող «Смоленскій Вѣстникъ» լրագիրը ութ ամսով։ Այժմ «Русскій Курьеръ» լրագիրը հաղորդում է որ Սմոլէնսկ նահանգի բնակիչները խնդիրք են ներկայացրել ներքին գործերի մինիստրին պակասեցնել յիշեալ լրագրի խափանման ժամանակամիջոցը և կրկին թոյլ տալ որ այդ թերթը հրատարակվի, աչքի առջև ունենալով այն մեծ օգուտը որ նա բերում էր ամբողջ նահանգին։

—

Մի գաւառական քաղաքի հայ դպրոցի համար հարկաւոր են երկու ուսուցիչներ՝ մէնը ռուսաց լեզուի, միւսը թւաբանութեան շաբաթական 18 դասերով, իւրաքանչիւրը 600 բուբլ ռոճիկով։ Տեղեկութիւն ստանալու համար կարող են դիմել «Մշակի» խմբագրութեանը։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Այստեղ խիստ յաճախ են կրկնվում սպանութիւններ և հրդեհներ։ Այս վերջին ամսվայ ընթացքում Նուխու մէջ մօտ տաս մարդ է սպանված և չորս թէ հինգ տուն այրված։ Վերջին ժամանակ այստեղ տարածված է մի տեսակ հիւանդութիւն, որով բոլորովին առողջ կազմուածքի տէր մարդիկ յանկարծ ընկնում, մեռնում են։ Այդ բանի վրա ուշադրութիւն դարձնող չը կայ։»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Այս օրերումս մի լեզգի հիւանդ կին, որի ոտի ոսկորները փշրված են, կառքով դնալիս է լինում բժշկի մօտ։ Յանկարծ մի կազակ կառքի առաջը կտրելով հրամայում է անճար կնոջ վայր իջնել, ասելով թէ կառքը մի մեծաւորի համար հարկաւոր է և փողոցում նա ուրիշ կառք չէ գտել։ Երբ կինը յայտնում է կառքից իջնելու իր անկարելիութիւնը, կազակը առանց այլևայլութեան մտրակների հարուածներով վայր է գլորում խեղճ կընոջը կառքի միջից։»

—

Մեզ պատմումեն որ Ներսիսեան ուսումնարանի տեսուչ Արշակ Նահապետեան կազմում է մի բազմաթիւ ուսուցչական խումբ էջմիածին գնալու համար։ Ինչ ակադեմիա կը լինի, որի ռեկտորը Նահապետեանը կը լինի (Գաբրիել Այվազովսկուց յետոյ), իսկ պրոֆէսորները կը լինեն աւելով հաւաքված ուսուցիչներ։ Այդ ակադեմիայից ազգը պիտի սպասի իր լոյսը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են որ գերմանացի գիտնական Կիպէրտի և Ս. Պետերբուրգի հայ ազգասէրների մէջ պայմանները չը կայացան, ուստի Հայաստանի աշխարհագրական քարտէզը չի տպվի։

—

Թիւրքայ Հայաստանից եկողները մեզ պատմում են որ այժմ այնտեղ ճանապարհորդութիւնը անվտանգ է։ Էրզրումից մինչև Խնուս, Խլաթ, Մուշ, Բազէշ և Խարբերդ ապահով է։ Միայն Դիարբէքիրի վիլայէթում և Ջուլամերկի, Աղբակի և Բէյթուլի սանջակներում քիւրդ ցեղերը առաջուայ պէս ճանապարհորդներին կողոպտում են։ Ամենաանապահով տեղերը Հին-Բայազէտից են մինչև Վան։ Այդ ճանապարհի վրա թէ բազմաթիւ աւազակներ կան և թէ ինքն Թիւրքայ կառավարութիւնը անհանգիստ է անում ճանապարհորդներին, նրանց վրա կասկածանքով նայելով և շատ անգամ բանտարկելով նրանց։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են։ «Այս օրերս լուր տարածվեցաւ, որ մեր կողմերի հայերին թոյլ է տրուած գաղթել Ղարսի նահանգը։ Շատերը գիւղացիներից որոնք հողից զուրկ են, բայց կուզենային պարապել երկրագործութեամբ, իսկոյն խնդիրք ներկայացրին, բայց կրկին մերժում ստացան։»

—

Մեզ գրում են Ալէքսանդրապօլից որ այդտեղ եղանակները զով են անցնում, անձրևները գալիս են, մի անգամ կարկուտ էլ տեղաց, բայց վնաս չը տուեց։ Դարին քաղվել է արդէն դաշտերում, ցորենն էլ սկսում են քաղել։ Հունձերը սաստիկ առատ են։ Խոտը անցեալ տարուանից փոքր ինչ պակաս է։ Կենսական պիտոյքների գները իջնում են։

—

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Գերմանական պահպանողական կուսակցութիւնը իրան համարում է ճշմարտութեան միակ պաշտպան։ Կառավարչական կամայականութեան այդ պաշտպանները անամօթաբար գործում են այն ժողովրդի անունով, որին նրանք անդադար ճնշում են։ Բայց նրանց անամօթութիւնը երբէք այնքան մեծ չէ եղել ինչպէս այժմ։ Մատնութիւնը նրանց համար սովորական գործ է դարձել։ Ընդդիմադրականների գործունէութիւնը նրանք անուանում են դաւաճանութիւն դահին և հայրենիքին։ Ցայտնի ուղղութեան լրագիրները, որոնք կառավարութենից դրամական օժանդակութիւն են ստանում, փախչում են ազնիւ վիճաբանութենից բուն հարցի մասին և իրանց հակառակորդներին դաւաճաններ են անուանում։

Ինչպէս երևում է, գերմանական պահպանողականները հայրենիքը իրանց սեփականութիւն են համարում, որի գործերին միջամտելը նրանք արգելում են ազատամիտներին և առաջադէմներին։ Պօլեմիկայի այդ ձևի մասին գաղափար կազմելու համար կարելի է առաջ բերել հետևեալ օրինակը։ Գերմանական ազատամիտ լրագիրներից ամենանշանաւոր „Berliner Tageblatt“ լրագիրը նորերումս մի յօդուած տպեց, որտեղ ասուած էր, թէ որքան էլ ընդդիմադրականները թոյլ լինեն իշխան Բիսմարկի առաջ, այնու ամենայնիվ նոյնքան ամուր և հաստատ պէտք է մնան, որքան հաստատ էր Ֆրանսիական օրէնսդիր ժողովի մէջ եղելի „հինգի“ ընդդիմադրութիւնը։ Գերմանական կիսապաշտօնական լրագիրները հետևեալ մեկնութիւնը տուին այդ յօդուածին։ „Հինգի“ ընդդիմադրութիւնը Նապոլէօն III ժամանակ հանրապետականներից էր կազմված։ Նա ձգտում էր ոչնչացնել Ֆրանսիայի մէջ կայսերութիւնը և հասաւ իր նպատակին։ Ֆրանս-գերմանական պատերազմից յետոյ, ուրեմն ազատամիտները և առաջադէմները նոյնպէս ձգտում են թագաւորող ազգի անկմանը օտարների օգնութեամբ և Գերմանիայի ընդդիմադրական ազատամիտ կուսակցութիւնը յեղափոխական տարր է կազմում և կամենում է հայրենիքին դաւաճանել։ Սրանից կարելի է եզրակացնել, որ մինչև անգամ խօսել աւելորդ է ազատամիտների հայեացքների վրա գերմանական պետական գործերի մասին և ամեն տեսակ համակրութիւնը դէպի ազատամիտների կարծիքները պէտք է դաւաճանութիւն համարել։

Բաղդաւորապէս այսպիսի մտքեր յայտնում են կիսապաշտօնական անձինք և լրագիրներ, որոնք կառավարութիւնից դրամական օժանդակութիւն են ստանում և որոնք գերմանական լուսաւորված շրջանների մէջ ոչինչ համարում չունեն։ Գերմանիայի մէջ պահպանողականները բոլորովին չեն տիրապետում և երբեմն նրանց ծաղրելի գործողութիւնները բոլորովին այնպիսի տպաւորութիւն չեն գործում, ինչպէս ցանկանում է կառավարութիւնը։ Գերմանական հասարակական կարծիքը չափազանց զարգացած է և միջոց ունի կատարելապէս ազատ արտայայտվել։

Գերմանիայի մէջ նորերումս մի բրոշիւր հրատարակվեցաւ „արմատական ազատամտութիւն“ վերնագրով։ Այդ բրոշիւրի հեղինակին իշխան Բիսմարկ շնորհակալութիւն յայտնեց մի նամակով, որով ինքը ապացուցանում է բրոշիւրի հեղինակի կարծիքը, թէ ընդդիմադրական կուսակցութիւնը անընդունակ է և կարող է միայն անօգուտ կրիտիկա անել։ Պետական կանցլերը չէ յիշում, որ ընդդիմադրականները միջոց չունեն իրագործել իրանց սկզբունքները և որ իշխան Բիսմարկի կառավարութեան բոլոր ժամանակ նրանց իրաւունք է տրվել միայն կրիտիկա անել, հետևապէս անհիմն է եզրակացութիւնը ազատամիտ կուսակցութեան անընդունակութեան մասին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիայի դատարաններից մէկում նորերումս դատվում էր մի ութ ամսեան աղջիկ, Զոյա Մանսֆիլդ անունով, որը մեղադրվում էր օտարի սեփականութեան փչացնելու մէջ։ Յանցանքը հետևեալ կերպով էր կատարված։ Աղջիկը կուչ ուտելուց յետոյ, գլորվում էր խոտի վրա հարուան այգում, ուր քոյրերը տարել էին նրան։ Այդին մէկ լուացարար կնոջն էր պատկանում. ցանկի վրա փռած էր մէկ դերասանուհուն պատկանող բարակ սպիտակ բազանիքի շապիկ, կարված թանդագին աղնեզործներով։ Աղջիկը սողալով մօտեցաւ ցանկին. չը նայելով նրա հասակին, երբ պճնասիրութիւնը դեռ ևս չէ զարթնում, այդ գեղեցիկ շորը այնքան հաւանեց նա, որ սկսեց դէպի ինքն քաշել, որ կարողանայ դրանով մօտիկից զուարճանալ։ Դժբաղդաբար այդ զուարճութիւնը տխուր վերջ ունեցաւ. քնքոյշ ասեղնագործը փոքրիկ աղջկայ ոչ պակաս քնքոյշ ձեռքերում մէկ անճառնի խճճված բան դարձաւ։ Բայց որովհետև անգլիական օրէնքներով անչափահասները պատասխանատու են օտարի սեփականութիւնը փչացնելու համար, այդ պատճառով վնասված դերասանուհին ծծի երեխայի վրա գանգատ տուեց դատարանին։ Դատը երկար շարունակվեց։ Մայրը, ներկայ լինելով որպէս պաշտպան, ամեն բոպէ օգուտ էր քաղում իրաւունքից և խօսում էր յօգուտ իր կլիենտի. ինքն մեղադրվածը շատ անգամ վիճաբանութիւնները ընդհատում էր իր բարձր աղաղակով։ Վերջապէս դատարանը, աչքի առաջ ունենալով նրա քնքոյշ հասակը, թէև մեղադրվածին ամեն տեսակ պատժից ազատեց, բայց դատապարտեց նրան 50 ֆունտ ստերլինգ տուգանքի, երբ նա կարողութիւն կունենայ այդ անձամբ տնելու։ Կարծես թէ փոքրիկը զգում էր իր անաջողութիւնը. նա ճանկրտեց դատաւորի բիթը, որը դատաստանից վերջը կամենում էր համբուրել նրան։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յուլիսի։ 22-ին „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է որ թագաւոր կայսրը, Օգոստափառ ընտանիքի հետ, Նիժնի-Նովգորոդ քաղաքից ուղևորվեց „Օտվաժնի“ շոգենաւով Վոլգա գետի ճանապարհով մինչև կոստրոմա նահանգի սահմանները։ Շոգենաւին գիմաւորեց մի պատգամաւորութիւն հացով և աղով։

ՄՇԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍ. Յ. Ս. Յաւում ենք որ ոչինչ տեղեկութիւն չենք կարող տալ ձեզ թէ որտեղ կարելի է այս տարի լաւ յատկութեան բժժներ ձեռք բերել։ Գուցէ կամենաք որ յայտարարութիւն տպենք այդ մասին. այն ժամանակ կարելի է կը յայտնվեն բժժ ծախելու ցանկացողները։

—ԵՐԵՒԱՆ Յ. Ա. Պարոն Գ. սխալվել է։ Այդ մասին մանրամասն նամակ կը գրենք ձեզ։

—ՂՈՒԲԱ. Ա. Մենք ոչինչ տեղեկութիւն չենք կարող տալ ձեզ գոբեմների և այլ երկրագործական մեքենաների որպիսութեան մասին։ Ձեր ադրէսը կը հաղորդենք Ռուս-Ամերիկական մագազին և խնդրում ենք նրա հետ գրագրութիւն ունեցէք։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ